ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(2), 2021 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 911.37

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *, Վ. Ա. ՊՈՏՈՍՅԱՆ **

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Տարաբնակեցման անքակտելի մաս հանդիսացող գյուղական տարածքները համարվում են հասարակության տարածքային կազմակերպման կարևորագույն օղակներից մեկը: Նրանում տեղի ունեցող փոփոխություններն իրենց նշանակալից ազդեցությունն են թողնում հասարակական զարգացման տարբեր գործընթացների վրա: Հոդվածում կատարվել է ՀՀ գյուղական տարաբնակեցման փոփոխությունների ժամանակակից միտումների վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտում, մատնանշվել են դրանց լուծման ուղիները:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.2.129

***Keywords*:** RA, rural settlement pattern, transformation, tendencies, elevation zones, problems, solutions.

Խնդրի դրվածքը: Լեռնային մակերևույթ ունեցող երկրներում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման բնույթը, առանձնահատկությունները և տարածքային տարբերություններն առավել ցայտուն են դրսևորվում գյուղական տարաբնակեցման միջոցով, քանի որ վերջինս ձևավորում և զարգանում է համեմատաբար ընդարձակ տարածքների վրա և առավել մեծ չափով է իր վրա կրում միջավայրի տարբեր տարրերի ներգործությունը:

Այս կամ այն երկրում գյուղական տարաբնակեցման վերլուծության կարևոր խնդիրներից է նաև տարաբնակեցման կառուցվածքում փոփոխությունների առկա միտումների բացահայտումը, դրանց սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային հետևանքների վեր հանումը և լուծման ուղիների մատնանշումը: Քանի որ տարաբնակեցումը լինելով հասարակության տարածքային կազմակերպմն հենքը, իր հերթին նշանակալից ազդեցություն է թողնում տարածքի յուրացման, տնտեսության առանձին ճյուղերի զարգացման և տեղաբաշխման վրա: Սույն հոդվածում կատարվել է ՀՀ գյուղական տարաբնակեցման կառուցվածքում տեղի ունեցած ժամանակակից փոփոխությունների վերլուծություն, դրանց առկա միտումների և հիմնախնդիրների բացահայտում և մատնանշվել են այդ հիմնախնդիրների լուծման ուղիները:

* E-mail: a.potosyan@ysu.am
** E-mail: v.potosyan@ysu.am

Հետազոտության սկզբնաղբյուրները և մեթոդիկան: Հետազոտության համար սկզբնաղբյուրներ են ծառայել ՀՀ մարզերի և առանձին տարածաշրջանների գյուղական բնակավայրերի 2015 և 2020 թթ. հունվարի մեկի դրությամբ բնակչության թվաքանակի վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած նյութերը [1], ՀՀ բոլոր գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության տվյալները: Աշխատանքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, ամփոփման, ընդհանրացման և համեմատական աշխարհագրական մեթոդները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015–2020 թթ. հանրապետության գյուղական բնակչության բացարձակ թիվը նվազել է 51,7 հազ.-ով կամ 4,2%-ով [1, 2]: Գյուղական բնակչության բացարձակ թվի նվազում է տեղի ունեցել բոլոր մարզերում, սակայն այն առավել մեծ թիվ է կազմել Սյունիքում (6666-ով կամ 13,7%-ով), Շիրակում (10009-ով կամ 8,3%-ով), Լոռիում (7402-ով կամ 6,5%-ով), Վայոց ձորում (2421-ով կամ 6,5%-ով), Տավուշում (4180-ով կամ 5,4%-ով): Արմավիրի և Արարատի մարզում նշված ժամանակահատվածում գյուղական բնակչության թվի նվազումը հարաբերական ցուցանիշով թեև փոքր է մյուս մարզերից, սակայն բացարձակ թվով այն երկու մարզերում միասին կազմում է ավելի քան 15,7 հազ. մարդ կամ այս մարզերին է բաժին ընկնում 2015–2020 թթ. ՀՀ գյուղական բնակչության թվի նվազման 30,5%-ը, իսկ Լոռու և Շիրակի մարզերին միասին՝ 33,7%-ը (աղյ. 1):

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի գյուղական մշտական բնակչության թվի շարժընթացը [1–3]

Մարզերը	2011		2015		2020	
	ա	բ	ա	բ	ա	բ
Արագածոտն	102330	9,2	122980	10,0	120793	10,2
Արարատ	186264	16,8	208777	16,9	201272	17,0
Արմավիր	180720	16,3	210903	17,1	202657	17,1
Գեղարքունիք	163652	14,8	167483	13,6	165026	13,9
Լոռի	97753	8,8	113484	9,2	106082	9,0
Կոտայք	116916	10,6	126847	10,3	126225	10,7
Շիրակ	105033	9,5	121300	9,8	111291	9,4
Սյունիք	46601	4,2	48757	3,9	42091	3,6
Վայոց ձոր	33875	3,1	37538	3,0	35117	3,0
Տավուշ	74423	6,7	76847	6,2	72667	6,1
ՀՀ-ում	1107567	100,0	1234916	100,0	1183221	100,0

ա՝ բացարձակ թվերով; բ՝ տոկոսներով:

Քննարկվող ժամանակահատվածում մշտական բնակչություն ունեցող գյուղերի թիվը ՀՀ-ում թեև ավելացել է 9-ով, սակայն այն առավելապես տեղի է ունեցել մանր և փոքր գյուղերի խմբերում: Եթե 2015 թ. ՀՀ-ում մինչև 200 մարդ ունեցող գյուղերը կազմում էին ՀՀ մշտական բնակչությունն ունեցող գյուղերի թվի 16,6% [4], ապա 2020 թ.՝ 19,1%-ը, կամ 6 տարվա ընթացքում մանր և փոքր գյուղերի մասնաբաժինն ավելացել է տոկոսային 2,5 կետով: Միայն մինչև 50 բնակիչ ունեցող գյուղերի խմբում դրանց բացարձակ թիվն ավելացել է 14-ով

կամ շուրջ 54%-ով: Ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման առումով առավել ռիսկային համարվող մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերի թիվը 2015–2020 թթ. ՀՀ-ում ավելացել է 32-ով (10,1%-ով), իսկ գյուղերի այդ խմբի միջին մարդաքանակը նվազել է 7-ով: Համեմատաբար կայուն է մնացել 501–1000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը և դրանցում բնակչության բացարձակ թվաքանակը:

Բնակչության թվով ավելի մեծ գյուղերի (1000-ից ավելի մարդ) խմբերում տեղի է ունեցել ինչպես բնակավայրերի թվի, այնպես էլ դրանցում ապրող բնակչության թվաքանակի նվազում: 2015–2020 թթ. ՀՀ-ում 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերի թիվը նվազել է 21-ով՝ 418-ից 397 (աղյ. 2): Սա նշանակում է, որ մարդաքանակով ավելի մեծ խմբերում (1001–3000, 3001–5000 և 5000-ից ավելի մարդ) տեղի է ունեցել գյուղերի թվի նվազում՝ անցում մարդաքանակով ավելի ցածր խումբ, որի հետևանքով գյուղերի որոշակի քանակ հայտնվում է մարդաքանակով ռիսկային համարվող խմբում (501–1000 կամ 201–500 մարդ ունեցող գյուղերի խմբում):

Աղյուսակ 2

ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացն ըստ մարդաշատության խմբերի (2011–2020 թթ.)[1–3]

Տարեթվեր	Գյուղական բնակավայրերի թիվը	Գյուղական բնակչության թիվը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ մարդաշատության խմբերի (մարդ)															
			մինչև 50		51–100		101–200		201–500		501–1000		1001–3000		3001–5000		5000-ից ավելի	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
2011	913*	1103415	32	765	48	3727	92	13936	190	65169	180	132409	293	521096	54	211932	24	154381
2015	912*	1234916	26	639	47	3659	77	11417	166	53731	177	125351	312	555274	72	266214	34	218631
2020	921	1183221	40	1075	48	3632	88	13298	172	56317	176	125545	301	533096	65	246547	31	203711
Նույնը տոկոսներով																		
2011	100,0	100,0	3,5	0,0	5,3	0,4	10,1	1,3	20,8	5,9	19,7	12,0	32,1	47,2	5,9	19,2	2,6	14,0
2015	100,0	100,0	2,9	0,0	5,2	0,3	8,5	0,9	18,2	4,3	19,4	10,2	34,2	45,0	7,9	21,6	3,7	17,7
2020	100,0	100,0	4,3	0,1	5,2	0,3	9,6	1,2	18,7	4,8	19,1	10,6	32,7	45,0	7,0	20,8	3,4	17,2

ա՝ բացարձակ թվերով; բ՝ տոկոսներով:
*՝ 2011 թ.՝ 31 և 2015 թ.՝ 32 գյուղ մշտական բնակչություն չեն ունեցել:

Գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում մարդաքանակի նվազման նշված միտումը, անկախ բնակավայրի մարդաքանակից, հղի է տվյալ բնակավայրի համար ոչ ցանկալի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հետևանքներով: Առաջին հերթին դա հանգեցնում է այդպիսի գյուղերի տնտեսաարտադրական ներուժի նվազմանը, որի պատճառով արդյունավետ չեն օգտագործվի բնակավայրի տարատեսակ ռեսուրսները: Խախտվում է բնակավայրերի (գյուղերի) ժողովրդագրական ներուժի բնականոն կառուցվածքը (հատկապես սեռատարիքային կառուցվածքը), որի պատճառով նաև՝ բնակչության վերարտադրության բնականոն ընթացքը: Մարդաքանակի առումով առավել ռիսկային համարվող գյուղերում նման միտումների հետագա զարգացումը կարող է հանգեցնել նաև սոցիալական բնույթի մի շարք այլ խնդիրների սրման:

Մասնավորապես՝ կդժվարանա այդպիսի գյուղերում կրթական, առողջապահական սպասարկման և կենսական այլ նշանակություն ունեցող ծառայությունների կազմակերպումը և զարգացումը: Ի վերջո՝ անկախ գյուղական բնակավայրի մարդաքանակից, նշված միտումների պահպանումը և խորացումը կհանգեցնի դրանց աստիճանական «ծերացման», իսկ ռիսկային խմբի բնակավայրերում՝ բնազրկման:

Աղյուսակ 3

ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացն ըստ բարձրության գոտիների (2011–2020 թթ.) [1–3]

Տարեթվեր	Գյուղական բնակավայրերի թիվը	Գյուղական բնակչության թիվը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների, *մ*																	
			մինչև 800		801–1000		1001–1200		1201–1400		1401–1600		1601–1800		1801–2000		2001–2200		2200-ից բարձր	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
2011	913*	1103415	46	46501	197	379825	75	84290	77	105439	143	124004	134	116552	145	187106	92	58266	4	1432
2015	912*	1234916	46	49579	197	431334	75	95903	77	117149	142	142371	134	132577	145	196447	92	67846	4	1710
2020	921	1183221	47	48136	199	416202	77	93032	80	113839	140	132158	134	122693	148	192140	92	63349	4	1672
Նույնը տոկոսներով																				
2011	100,0	100,0	5,0	4,2	21,6	34,4	8,2	7,6	8,4	9,6	15,7	11,2	14,7	10,6	15,9	17,0	10,1	5,3	0,4	0,1
2015	100,0	100,0	5,1	4,0	21,6	35,0	8,2	7,8	8,4	9,5	15,6	11,5	14,7	10,7	15,9	15,9	10,1	5,5	0,4	0,1
2020	100,0	100,0	5,1	4,1	21,6	35,2	8,4	7,9	8,7	9,6	15,2	11,2	14,5	10,4	16,1	16,2	10,0	5,3	0,4	0,1

ա՝ բացարձակ թվերով; բ՝ տոկոսներով:
*՝ 2011 թ.՝ 31 և 2015 թ.՝ 32 գյուղ մշտական բնակչություն չեն ունեցել:

Լեռնային մակերևույթ և բարձրաչափական նիշերի մեծ լայնութ ունեցող երկրներում, ինչպիսին նաև ՀՀ է, գյուղական տարաբնակեցման շարժընթացի ուսումնասիրություններում առանձնակի կարևորություն ունի նաև ըստ բարձրության գոտիների վերջինիս վերլուծությունը և առկա միտումների բացահայտումը: Աղյ. 3-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 6 տարիներին գյուղական բնակչության բացարձակ թիվը նվազել է բարձրության բոլոր գոտիներում: Սակայն հարաբերական ցուցանիշի առումով նշված միտումը չի դրսևորվում: Բարձրության հինգ գոտիներում (մինչև 800, 801–1000, 1001–1200, 1201–1400 և 1801–2000 *մ*) տեղի է ունեցել գյուղական բնակչության բացարձակ թվի նվազում, սակայն տոկոսային առումով այդ գոտիների բնակչության մասնաբաժինը, թեև փոքր չափով, ավելացել է: ՀՀ-ում բնակեցման ներքին սահմանից մինչև 1400 մ բարձրության գոտում 2015–2020 թթ. գյուղական բնակչության մասնաբաժինն ավելացել է 0,8%-ով, իսկ 1401–1800 *մ* բարձրության գոտում՝ նվազել է 0,6%-ով: Բնակեցման ներքին սահմանից մինչև 1400 *մ* բարձրության գոտիներում ՀՀ գյուղական բնակչության մեջ տեսակարար կշիռների ավելացումն առավելապես տեղի է ունեցել Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի համապատասխան բարձրության գոտիների հաշվին (աղյ. 3): Վերջինս հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

1. քանի որ 2015–2020 թթ. Կոտայքի մարզի գյուղական բնակչության բացարձակ թիվը մնացել է գրեթե նույնը, իսկ ՀՀ գյուղական բնակչության մեջ

մարզի մասնաբաժինն ավելացել է 0,4%-ով, բացի այդ Կոտայքի գյուղական բնակչության 50,3%-ը ապրում է 1001–1400 *մ* բարձրության գոտում;

2. Արագածոտնի մարզում նույն ժամանակահատվածում գյուղական բնակչության թիվը թեև նվազել է 2,2 հազ., սակայն մարզի մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ ավելացել է 0,2%-ով և մարզի 801–1400 *մ* բարձրության գոտում է ապրում գյուղական ամբողջ բնակչության 46,5%-ը;

3. Արմավիրի և Արարատի մարզերի ամբողջ գյուղական բնակչությունը տեղաբաշխված է մինչև 1400 *մ* բարձրության գոտիներում և այդ երկու մարզին բաժին է ընկնում բնակեցման ներքին սահմանից մինչև 1400 *մ* բարձրության գոտում ապրող գյուղական բնակչության ավելի քան 60%-ը;

4. թեև Տավուշի մարզի գյուղական բնակչության 98%-ից ավելի ապրում է մինչև 1400 *մ* բարձրության գոտիներում, սակայն 2015–2020 թթ. մարզի գյուղական բնակչության թիվը նվազել է մոտ 1760-ով և մարզի մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ նվազել է 0,1%-ով:

Այսպիսով՝ 2015–2020 թթ., չնայած ՀՀ տարածքի բարձրության բոլոր գոտիներում գյուղական բնակչության բացարձակ թվի նվազմանը, բնակեցման ներքին սահմանից մինչև 1400 *մ* բարձրության գոտում տեղի է ունեցել ՀՀ գյուղական բնակչության բաշխման մեջ այդ գոտու մասնաբաժնի ավելացում՝ առավելապես Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի բարձրության համապատասխան գոտիների կամ Արարատյան հարթավայրի և այն եզրավորող մինչև 1400 *մ* բարձրության տարածքների հաշվին: Դա նշանակում է, որ ՀՀ-ում գյուղական բնակչության տեղաբաշխման մեջ շարունակում է պահպանվել և մեծանալ ցածրադիր – հարթավայրերի տարածքների բարձր տեսակարար կշիռը:

Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ գյուղական բնակչության ըստ բարձրության գոտիների տեղաբաշխման մեջ 0,3%-ով ավելացել է նաև 1801–2000 *մ* բարձրության գոտու մասնաբաժնը: Այն տեղի է ունեցել հիմնականում Գեղարքունիքի մարզի 1801–2000 *մ* բարձրության գոտու հաշվին: Քանի որ այդ գոտում գյուղական բնակչության 63%-ից ավելին բաժին է ընկնում Գեղարքունիքին: Բացի այդ այստեղ 2015–2020 թթ. գյուղական բնակչության բացարձակ թվի նվազումը կազմել է ընդամենը 1,5%, իսկ Շիրակի և Արագածոտնի մարզերի բարձրության այդ գոտիներում՝ 3,5% (աղյ. 3), իսկ Գեղարքունիքի մարզի բարձրության համապատասխան գոտում՝ 1,0%:

Այսպիսով՝ ՀՀ գյուղական բնակչության ըստ բարձրության գոտիների տեղաբաշխման մեջ 2015–2020 թթ. 1801–2000 *մ* արձրության գոտում գյուղական բնակչության մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել Գեղարքունիքի մարզում, իսկ Շիրակի, Արագածոտնի և մնացած մարզերի համապատասխան բարձրության գոտիներում՝ տեղի է ունեցել գյուղական բնակչության մասնաբաժնի նվազում:

2015–2020 թթ. ՀՀ գյուղական բնակչության ըստ բարձրության գոտիների տեղաբաշխման հատկանշական մյուս փոփոխությունը 1401-1800 մ բարձրության գոտում գյուղական բնակչության ինչպես բացարձակ թվի, այնպես էլ բարձրության այդ գոտում գյուղական բնակչության մասնաբաժնի նվազումն է: 2015–2020 թթ. նշված գոտում գյուղական բնակչության բացարձակ թիվը նվազել է ավելի քան 20 հազ.-ով (աղյ. 3), կամ այս գոտուն է բաժին ընկնում գյուղական բնակչության թվաքանակի նվազման շուրջ 39%-ը: 1401–

1800 *մ* բարձրության գոտում է տեղաբաշխված ՀՀ գյուղական բնակչության 21,6%-ը (254851 մարդ): Նշված գոտում գյուղական բնակչության 50,6%-ը (129082 մարդ) բաժին է ընկնում Լոռու և Շիրակի մարզերի համապատասխան բարձրության գոտիներին, Արագածոտնի մարզին՝10,1%-ը (25832 մարդ), Կոտայքին՝ 22,6%-ը (57708 մարդ), Սյունիքին՝ 8,9%-ը (22577 մարդ), Վայոց ձորին՝ 5,7%-ը: Մնացած մարզերի բաժինն անհամեմատ փոքր է, իսկ Արմավիր մարզի բարձրության այդ գոտում չկա գյուղական ոչ մի բնակավայր: Քանի որ Կոտայքի մարզում նշված ժամանակահատվածում գյուղական բնակչության թիվը մնացել է գրեթե նույնը, իսկ Արագածոտնում 2015 թ. համեմատ այդ գոտում գյուղական բնակչության թիվը նվազել է ընդամենը 560-ով կամ 2,1%-ով, ուստի 1401–1800 *մ* բարձրության գոտում գյուղական բնակչության մասնաբաժնի նվազումը տեղի է ունեցել հիմնականում Լոռու և Շիրակի մարզերի նշված գոտիներում գյուղական բնակչության թիվը շուրջ 10,6 հազ.-ով նվազելու պատճառով: Այսինքն՝ միայն այս երկու մարզում 2015–2020 թթ. 1401–1800 *մ* բարձրության գոտում գյուղական բնակչության թիվը նվազել է 7,6%-ով: Սյունիքի մարզում այն բացարձակ թվով կազմել է 4,4 հազ. մարդ կամ 16,4 %, Վայոց ձորում (1738 մարդ)՝ 10,7%:

Այսպիսով՝ 2015–2020 թթ. ՀՀ գյուղական բնակչության ըստ բարձրության գոտիների տեղաբաշխման մեջ 1401–1800 *մ* բարձրության գոտում գյուղական բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշով նվազումն առավելապես տեղի է ունեցել Սյունիքի, Վայոց ձորի, Շիրակի և Լոռու մարզերի բարձրության տվյալ գոտում գյուղական բնակչության թվի առավել մեծ չափով նվազման պատճառով:

Եզրակացություն: Համաձայն ՀՀ գյուղական տարաբնակցեման 2015–2020 թթ. փոփոխությունների վերլուծության արդյունքների ընդհանրացման՝

1. թեև ՀՀ գյուղական բնակչության թիվը նվազել է բոլոր մարզերում, սակայն հանրապետության գյուղական բնակչության մեջ մասնաբաժնի նվազում է տեղի ունեցել Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում;
2. ՀՀ-ում տեղի է ունեցել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ռիսկային խմբերում գյուղական բնակավայրերի թվի ավելացում, իսկ 1000-ից ավելի մարդ ունեցող խմբերում՝ ինչպես բնակչության, այնպես էլ բնակավայրերի թվի նվազում: Վերջինս հանգեցրել է մարդաքանակով ավելի մեծ խմբերից գյուղերի անցում ավելի փոքր մարդաքանակով խումբ, որի պատճառով դրանցից որոշները հայտնվել են սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական առումով ռիսկային խմբերում;
3. մարդաքանակի առումով գյուղական բնակավայրերի ռիսկային խմբերում շարժընթացի առկա միտումների պահպանումը կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հիմնախնդիրների սրման, իսկ առանձին դեպքերում՝ նաև դրանց բնազրկման;
4. ՀՀ-ում բնակեցման ներքին սահմանից մինչև 1400 *մ* բարձրության գոտիներում տեղի է ունեցել գյուղական բնակչության մասնաբաժնի ավելացում, իսկ 1401–1800 *մ* գոտում՝ նվազում;
5. բնակեցման մինչև 1400 *մ* բարձրության գոտիներում գյուղական բնակչության մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել առավելապես Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի նշված բարձրության գոտիների հաշվին, ինչը նշանակում է, որ ՀՀ գյուղական բնակչության

տեղաբաշխման մեջ շարունակում է ավելանալ Արարատյան հարթավայրի և այն եզրավորող գոտու տեսակարար կշիռը;

6. 1801–2000 *մ* բարձրության գոտում գյուղական բնակչության մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել միայն Գեղարքունիքի մարզի հաշվին, իսկ Շիրակի, Արագածոտնի և մնացած մարզերի բարձրության նշված գոտիներում տեղի է ունեցել գյուղական բնակչության մասնաբաժնի նվազում;

7. բարձրության 1401–1800 *մ* գոտում տեղի է ունեցել գյուղական բնակչության ինչպես բացարձակ թվի, այնպես էլ տեսակարար կշռի նվազում՝ հիմնականում Շիրակի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համապատասխան բարձրության գոտում գյուղական բնակչության թվի նվազման պատճառով;

8. հաշվի առնելով գյուղական տարաբնակեցման փոփոխությունների ժամանակակից միտումները և առկա հիմնախնդիրները ՀՀ գյուղական տարածքների և տարաբնակեցման հեռանկարային զարգացման գլխավոր խնդիրները պետք է լինեն.

ա. ձեռնարկել սոցիալ-տնտեսական միջոցառումների համակարգ, որոնք կկանխեն ինչպես ՀՀ, այնպես էլ առանձին տարածաշրջանների գյուղական բնակչության բացարձակ թվի նվազումը,

բ. սոցիալ-տնտեսական զարգացման և ժողովրդագրական առումով ռիսկային համարվող գյուղական բնակավայրերի խմբում իրականացնել տարբերակված տարածաշրջանային և ոլորտային քաղաքականություն՝ առանձին դեպքերում այդպիսի բնակավայրերի տալով նաև հատուկ կարգավիճակ,

գ. ՀՀ մարզերի բարձրության տարբերի գոտիների համար մշակել և իրականացնել գյուղական տարածքների և տարաբնակեցման զարգացման տարբերակված քաղաքականություն՝ հիմք ընդունելով դրանցում գյուղական տարաբնակեցման փոփոխությունների առկա միտումները և գյուղական տարածքների զարգացման հնարավորությունները,

դ. ՀՀ գյուղական տարածքներում և տարաբնակեցման գործընթացներում տեղի ունեցող փոփոխությունների վեր հանումը, առկա հիմնախնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը պետք է դառնա ոչ միայն գիտա-գործնական կարևոր խնդիր, այլ նաև կառավարման համապատասխան օղակների գործունեության ծրագիր և ուղենիշ:

Ստացվել է՝ 15.04.2021
Գրախոսվել է՝ 05.07.2021
Հաստատվել է՝ 07.07.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 թ.*: https://armstat.am/am/?nid=82&id=1712
2. *ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2020*: https://armstat.am/am/?nid=82&id=232
3. *ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները*: https://www.armstat.am/am/?nid=187
4. Պոտոսյան Ա. *Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը*: Երևան (2017), 466 էջ:

А. А. ПОДОСЯН, В. А. ПОТОСЯН

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ И ПРОБЛЕМЫ ТРАНСФОРМАЦИИ СЕЛЬСКОГО РАССЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Резюме

Сельские районы, являющиеся неотъемлемой частью расселения, считаются одним из важнейших звеньев территориальной организации общества. Происходящие в них изменения существенно влияют на различные процессы общественного развития. В статье дан анализ современных тенденций трансформации сельского расселения в Республике Армения, выявляются существующие проблемы и указываются пути их решения.

A. H. POTOSYAN, V. A. POTOSYAN

CONTEMPORARY TENDENCIES AND CURRENT PROBLEMS OF RURAL SETTLEMENT PATTERN TRANSFORMATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Summary

As an integral part of settlement pattern, rural areas are considered one of the primary components of territorial organization of society. The changes taking place in the latter have a siginificant impact on various processes of social development. Contemporary tendencies analysis and current problems revelation of RA rural settlement pattern transformation have been done in the article, solutions have been pointed out as well.